

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ 2-ՐԴ ԿՈՆԳՐԵՍԸ՝ ՄԱՅԻՍԻ 2-ԻՆ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: Եթէ ՀՀ իշխանութիւնները վերստին մերժէին դահլիճ տրամադրել Համաժողովրդական շարժման 2-րդ կոնգրեսը անցկացնելու համար, արդէն կար որոշում թէկուզ փոքր խմբով այն թբիլիսիում անցկացնելու: Ինչպէս նշեց Լեւոն Տէր-Պետրոսեանի կենտրոնական շտաբի անդամ Մանուշակ Պետրոսեանը՝ իրենք եւ Լեւոն Տէր-Պետրոսեանին սատարող քաղաքական ուժերը՝ ՀԺԿ, ՀՀԾ, բազմիցս դիմել են մայրաքաղաքի տարբեր դահլիճներ վարձելու համար: Բոլոր դէպքերում էլ նրանց դիմումը մերժուել է, որի նպատակն, ըստ տիկին Պետրոսեանի, ակնյայտ քաղաքական է:



Լեւոն Տէր-Պետրոսեանի կենտրոնական շտաբի անդամ Մանուշակ Պետրոսեան

Նրա պատմելով, երբ վերջնականապէս պայմանաւորուածութիւն էր ձեռք բերուել թբիլիսեան գործընկերների հետ, օրերից մի օր կառավարութիւնից տեղեկութիւն են ստանում այն մասին, որ իրենց դիմումը՝ վարձել կառավարութեան նիւտերի դահլիճը, բաւարարուել է եւ կարող են այն քաղցնել մի ամբողջ օր: Սա, ըստ Մանուշակ Պետրոսեանի՝ խօսում է այն մասին, որ իշխանութիւնները հասկացել են, որ կոնգրեսը Հայաստանի սահմաններից դուրս անցկացնելը մեծ հարուած կարող է հասցնել իրենց հեղինակութեանը, եւ նրանք ճարահատեալ գնացել են այդ քայլին: «Այլ տրամաբանական պատասխան, քան թբիլիսիում կոնգրեսն անցկացնելու հեռանկարը, էջը կարող հիմք ծառայել իշխանութիւնների այդ քայլին, քանի որ մեր մօտ 50 դիմումները մերժուել էին անընդհատ: Իշխանութիւնները նաեւ լաւ գիտակցում էին, որ թբիլիսիում կոնգրեսն անցկացնելն աւելի մեծ հնչեղութիւն կ'ստանար», - լրագրողների հետ հանդիպման ժամանակ այսօր նշեց Մանուշակ Պետրոսեանը:

Մանուշակ Պետրոսեանն անդրադարձաւ նաեւ Երեւանի քաղաքապետարանին ներկայացրած հանրահաւաքներ, երթեր անցկացնելու իրենց բազմաթիւ իրազեկումներին, որոնք անհիմն ձեռով միշտ մերժուել են: Իրազեկումներ են ներկայացրել նաեւ Լեւոն Տէր-Պետրոսեանին սատարող քաղաքական ուժերը՝ մօտ 26 դիմում, որոնք եւս մերժուել են: Ամենազաւեշտալին, ըստ Պետրոսեանի, ՄԳ-ՀԿ-ի՝ Մայիսի 1-ին երթ անցկացնելու մասին իրազեկման մերժումն էր: «ՄԳ-ՀԿ-ն իր բնույթով սոցիալիստական կուսակցութիւն է, իսկ Մայիսի 1-ը աշխատաւորների միջազգային օրն է: Թէեւ մերժման պատճառները ձեւակաւորէն են անհասկանալի: Իրականում իշխանութիւնները խուսափում են, տազնապում են համաժողովրդական հզօր երթերից:», - ընդգծեց տիկին Պետրոսեանը:

Վարչական դատարանները ներկայացրած շատ դիմումների դէպքում քաղաքապետարանի մերժումներն ուժի մէջ են թողել: Այդ իսկ պատճառով համաժողովրդական շարժման կենտրոնը որոշել է դիմել Սահմանադրական Դատարան, այնուհետեւ՝ Եւրադատարան: Շարժման կենտրոնի իրաւաբան Ռոբերտ Սանտեանը քաղաքապետարանի մերժումները որակեց չհիմնաւորուած եւ չանհատականացուած, որոնց դէպքում քաղաքապետարանը չլուծ է կատարել չակերտաւոր եզրակացութիւնների վրայ՝ դրանով իսկ կատարելով բազմաթիւ խախտումներ: Համաժողովրդական շարժման 2-րդ կոնգրեսը կը կայանայ Մայիսի 2-ին, ժամը 12-ին Կառավարութեան նիւտերի դահլիճում:

4 ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐ ՅԱՅՏՆՈՒԵԼ ԵՆ ՆԱԽԻՋԵԻԱՆՈՒՄ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան վկայութեամբ՝ 4 հայաստանցիներ մոլորուել եւ յայտնուել են Նախիջեւանում:

Ըստ նախարարութեան այսօրուայ հաղորդագրութեան՝ Նորադուզի բնակիչներ Արտյոմ Զոհրաբեանը, Կարէն Թորոսեանը, Աղասի Ենոքեանը եւ գաւառցի Վանիկ Զմբեանը «գնացել են խաչիկ գիւղում տեղակայուած գինական՝ իրենց գինձառայող ընկերոջ հետ տեսակցութեան, այնուհետեւ վերադառնալիս կորցրել են ճանապարհը եւ, հաւանաբար, անցել Նախիջեւանի կողմ»:

Նախարարութեան տուեալներով՝ հայաստանցիները գտնուած են Ատրպէյճանի անվտանգութեան մարմինների մօտ, նրանց առողջական վիճակը նորմալ է:

Հայկական կողմը դիմել է Կարմիր խաչի միջազգային գրասենեակ՝ Բաքուի համապատասխան գրասենեակի հետ հայաստանցիների վերադարձը կազմակերպելու նպատակով:

ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՄԵՐԺԵԼ Է ՍԴՅԿ-Ի ԴԻՍՈՒՄԸ

ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»: «Հայաստանում իրականում աշխատող մարդիկ շատ քիչ են, դժբախտաբար, բայց կարծում եմ, որ Մայիսի 1-ին շատերը հաճուքով դուրս կը գալին ու կը խօսէին իրենց խնդիրների մասին: Խօսքը իշխանափոխութեան մասին է, ինչպէս փորձում են մեզ դա վերագրել, այլ ընդհանրապէս սոցիալական խնդիրների մասին: Չէ՞ որ դա այն օրն էր, երբ հիմնականում բանուոր դասակարգն էր դուրս գալիս փողոց», - «Ա1+»-ի հետ զրոյցում ասաց ՄԳ-ՀԿ ատենապետ Լիւդմիլա Սարգսեանը: Սակայն Երեւանի քաղաքապետարանը թոյլ չի տուել Մայիսի 1-ին երթ անցկացնել:

Լիւդմիլա Սարգսեանն ասում էր, որ իրենք սոցիալիստական ուղիով լուծուածութեան կուսակցութիւն են, ուստի աշխատաւորութեան համաշխարհային տօնին նման երթ անցկացնել իրենց իրաւունքն է, ինչպէս նաեւ պարտաւորութիւնը: Տիկին Սարգսեանն անձամբ կողմ էր փողոց դուրս գալուն, թէկուզ մերժուած լինելու պարագայում, բայց կարծում է, որ իրենք իրաւունք չունեն

ժողովրդին կոչ անելու, որ դուրս գան, երթ անեն, որի արդիւնքում կարող են մարդիկ տուժեն: «Իհարկէ, ես չեմ բացառում, որ հետագայում մենք ստիպուած կը լինենք կազմակերպել նաեւ երթեր, որոնք արտօնուած չեն լինի: Ի վերջոյ, որքա՞ն կարելի է մերժել: Եթէ շարունակուեն այդ մերժումները, ապա բնականաբար ժողովուրդը ցանկութիւն է ունենալու հանդիպելու, երթ անելու, իր մտքերը, իր մտահոգութիւններն արտայայտելու, եւ ոչ մէկը չի կարող ժողովրդից այդ իրաւունքը խլել կամ արգելել», - ընդգծեց նա:

Ըստ նրա՝ հիմա մենք ունենք գիտակից, քաղաքականացուած, քաջ ժողովուրդ, որը գիտի, որ պիտի պայքարի մինչեւ վերջ իր իրաւունքների համար: «Եւ այստեղ Լեւոն Տէր-Պետրոսեանի կամ իշխանութիւնների խնդիրը չէ: Ժողովրդին առաջնորդելու կարիք էլ չկայ՝ նա իր ճանապարհն արդէն գտել է եւ գնում է դրանով: Ասեմ աւելին՝ նոյնիսկ նրանք են մեզ երբեմն առաջնորդում», - աւելացրեց նա:

ՄԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ Է ՍՏԵՂԾԵԼ ԵՒՆԻԿ-Ի ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: Մերժ Սարգսեանի կարգադրութեամբ ստեղծուել է աշխատանքային խումբ՝ Եւրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի Հայաստանի ժողովրդավարական հաստատութիւնների գործունէութեանը վերաբերող բանաձեւում ամփոփուած առաջարկութիւնների իրագործման համակարգման նպատակով: Խումբը ղեկավարելու է նախագահի աշխատակազմի ղեկավար Հովիթի Աբրահամեանը:

Խմբի կազմում ընդգրկուած են ԵՄԽՎ-ում Հայաստանի պատուիրակութեան անդամները, նախագահի օգնականը, արտաքին գործերի, արդարադատութեան փոխնախարարները, գլխաւոր դատախազի տեղակալը, Հանրային հեռուստառադիոխորհրդի նախագահն ու Հեռուստատեսութեան եւ ռադիոյի ազգային լայնաձողովի նա-

խագահը:

Խմբին յանձնարարուած է երկշաբաթեայ ժամկէտում ներկայացնել առաջարկութիւններ՝ առաջիկայ քայլերի վերաբերեալ:

Անցած շաբաթ Ստրասբուրգում ընդունուած բանաձեւով Եւրախորհրդի խորհրդարանական վեհաժողովը առաջարկել էր անյապաղ սկսել Մարտի 1-ի իրադարձութիւնների (որոնց զոհ են գնացել 10 եւ վիրաւորուել 200 հոգի) վերաբերեալ անկախ հետաքննութիւն, անյապաղ ազատ արձակել առերեւոյթ արհեստական եւ քաղաքական շարժառիթներով կալանաւորուած անձանց եւ անյապաղ վերացնել եւ ուժը կորցրած համարել «ժողովներ, հանրահաւաքներ, երթեր եւ ցոյցեր անցկացնելու մասին» օրէնքում Ազգային ժողովի կողմից վերջերս ընդունուած փոփոխութիւնները:

ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ ԴԻՄԵԼՈՒ Է ԵՐԱՂԱՏԱՐԱՆ

Համաժողովրդական Շարժման կենտրոնը որոշել է հայց ներկայացնել Մարդու իրաւունքների Եւրոպական Դատարան:

Ըստ Համաժողովրդական Շարժման կենտրոնի տարածած հաղորդագրութեան, որոշուել է «նախապատրաստել հայց Եւրադատարան, որով կը բողոքարկուեն 2008 թուականի Փետրուարի 19-ի նախագահական ընտրութիւնների արդիւնքների կեղծման հետ կապուած Հայաստանի Հանրապետութեան պետական մարմինների կողմից կատարուած իրաւախախտումները»:

«Հայցի նախապատրաստման համար ստեղծուել է փորձագէտների աշխատանքային խումբ Հայաստանի եւ օտարերկրեայ իրաւաբանների մասնակցութեամբ», - տեղեկացնում է հաղորդագրութիւնը:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԸ ԴԻՄԵԼ ԵՆ ՍՓԻՌՔԱՅԱՅՈՒԹԵԱՆԸ

Շիրակի մարզի ազատամարտիկներն կոչ են արել սփիւռ-քահայութեանը՝ ներազդել Հայաստանի իշխանութիւններին վրայ կալանաւորուած ազատամարտիկներին ազատ արձակելու համար:

«Իրենց քաղաքական հայեացքների համար անհիմն մեղադրանքներով այսօր բանտերում են գտնուում Արցախեան Հերոսամարտի մասնակիցներ, հրամանատարներ Աշոտ Զաքարեանը, Մուշեղ Սաղաթէլեանը, ազատամարտիկներ Յարութիւն Ուռուտեանը եւ Գէորգ Ղազարեանը», - ասուած է Շիրակի մարզի ազատամարտիկների դիմումում:

Նրանք յորդորել են սփիւռ-քահայերին «բարձրացնել իրենց բողոքի ձայնը եւ ունեցած բոլոր հնարաւորութիւններով ներգործել Հայաստանի իշխանութիւններին վրայ»: